Քուլպայի մէջ ծառայող բրիտանացի զինուորական մը 1762ին իրեն հետ մեծ քանակութեամբ սիկար տարած է Քրննեքթիքաթ: Յաջորդ տարի սիկարի առաջին գործարանները բացուած են Հիւսիսային Ամերիկայի մէջ: 1814ին Սպանիոյ մէջ Նափոլէոնի դէմ կռուած անգլիացի զինուորներ սիկարը իրենց հետ տարած են Անգլիա, իսկ Ֆրանսացի զինուորները՝ Փարիզ: 1823ին միայն 15 հազար սիկար ներածուած է Անգլիա, իսկ 1840ին թիւը բարձրացած է 13 միլիոնի: Քաղքենի դասակարգը կը սիրէր սիկար ծխել: Լորտ Պայրըն, Վիքթոր Հիւկո եւ Շարլ Պոպլէր, ինչպէս նաեւ՝ երաժիշտներ Պիլզե Եւ Ռաւլի սիկարի սիրահարներ էին: 1880ական տարիներուն լոնտոնցի դրամատէր մը Հաւանայի Հոյո տը Մոնթրէյ գործարանին ապսպրած էր փաթեթել խոշոր մատանիի հաստութեամբ կարճ սիկար մը, որպէսզի կարենար կարճ ժամանակի մէջ վայելել սիկարին ամբողջ համար:

Փօլ Կարմիրեան իր «Տը կուրմէ կայտ թու սիկար» գիրքին մէջ կը նշէ, թէ անգլիացիք ընդհանրապէս չէին քանակութեամբ սիկար սպասած են, որովհետեւ սիկարը պերճանք կը համարուէր, հետեւաբար բարձր տուրք սահմանուած էր անոր համար, մինչդեռ ծխամորճի յատուկ ծխախոտ պերճանք չէր: Անգլիոյ մէջ շինուած սիկարներ թէեւ ներածուած տերեւներով կը պատրաստուէին, սակայն նուազ տուրք սահմանուած էր անոնց համար:

Հակառակ բարձր տուրքին, սպանական սիկարները, որոնք Սելիոյ կը կոչուէին, ժողովրդականութիւն կը վայելէին Լոնտոնի եւ Փարիզի մէջ: Ուր ճաշէն ետք սիկար ծխելը նորածնութիւն էր: Լոնտոնի մէջ յայտնուեցան սիկար ծխելու սենեակներ, որոնք կը կոչուէին տիվան, իսկ եւրոպական երկաթուղիներու վրայ սկսան երթեւեկել «ծխողներու վակոններ»: Միջուկ յատուկ մետաքսէ բաճկոններ նորածնութիւն դարձան, առիթ տալով, որ մարդիկ «ծուխի ու մոխիրի» բաղնիք մը առնեն՝ առանց ծուխի գարշահոտով ապականելու իրենց շքեղ հագուստները: Միջուկ բաճկոնը վերածուեցաւ թիւքսետոյի, գոր Ֆրանսացի մինչեւ այսօր կը կոչեն լը սմոքիկ: Ֆրանսան մինչեւ այսօր կը մնայ աշխարհի ամէնէն աւելի սիկար սիրող երկիրներէն մէկը:

Միացեալ Նահանգներու տարածքին սիկար ծխելու սովորութիւնը ընդհանրացած է քաղաքացիական պատերազմէն ետք, երբ բազմաթիւ ամերիկեան ընկերութիւններ սիկար արտադրած են Ամերիկայի մէջ մշակուած տերեւներով: Սիկարն ու ամերիկեան քաղաքականութիւնը երկար ժամանակ է ի վեր կապուած են իրարու: Քուլպայի գրագէտ եւ յեղափոխական Ոտոէ Մարթի 1881էն 1895 ապրած է Նիւ Եորք: Երբ ան ի վերջոյ Քուլպա վերադարձած է զայն ազատագրելու համար Սպանիոյ լուծէն, վայելած է զօրակցութիւնը սիկար շինող հազարաւոր քուլպացիներու, որոնք խոյս տուած էին դէպի Քի Ուէսթ եւ Թամպա: Յեղափոխութեան ծրագիրը Քի Ուէսթէն Հաւանա ուղարկուած էր սիկարի մէջ փաթեթուած: Այս առաջին յեղափոխութիւնը յաջողութեամբ պսակուած էր նախագահ Թետի Ռուզվելթի եւ Սան խուան Բուրիոյ վրայ ամերիկեան ուժերու ներկայութեամբ, թէեւ Մարթի գոհուած էր եւ այժմ կը համարուէր Քուլպայի ճորճ Ուաշինգթոնը: 60 տարի ետք, 1955ին, երբ Քասթրոն բանտարկուած էր Այլ աֆ Փայնզի մէջ, անոր զօրակցները գաղտնի տեղեկութիւններ կը փաթեթէին սիկարի մէջ եւ զայն կը հասցնէին բանտ:

007 ԿԸ ՎԱՌԷ ՊԱՏՏԱՌԸ

ՃԷՅՍՍ ՊՈՆՏ ՍԻԿԱՐ ՍԸ ԿԸ ԾԽԷ ԻՐ ՆՈՐԱԳՈՅՆ ԺԱՊԱՒԵՆԻՆ ՍԵՋ՝ ԶԱՅՐՈՅԹ ՊԱՏՃԱՌԵԼՈՎ ԾԽԱՆՈՏԻ ԴԵՍ ՊԱՅԵՐՈՂ ԲԱԶՄԱԹԻ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ: «ՍԻԿԱՐ ԱՅԻՇՈՒՆԱՏՕ» ԹԵՐԹԻՆ ՍԵՋ ՊԱՃՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾ ՍԸ ԿԸ ՓՈՒԹԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ

«Տայ էնատըր տէյ» ժապաւէնին մէջ ձէյմս Պոնտ նախնաձեւի է նաեւ, որովհետեւ սիկար կը ծխէ Քուլպայի մէջ: Սակայն երեւոյթը զայրոյթ պատճառած է Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ մէջ թոքերու պաշտպան «ցարբերու», ինչպէս նաեւ՝ Ամերիկայի Թոքերու Ընկերակցութեան, որոնք հրապարակու քննադատած են Բրիտանիոյ ամէնէն հռչակաւոր գաղտնի ոստիկանին ծխելը շարժապատկերի պատճառին վրայ:

Ամերիկայի Թոքերու Ընկերակցութեան ներկայացուցիչները մտահոգութիւն կը յայտնեն, թէ Պոնտ կը քաջալերէ ծխելը եւ զայն իբրեւ դրական երեւոյթ կը ներկայացնէ մանուկներուն: Սակայն, եթէ այս տրամաբանութեան հետեւինք, ձէյմս Պոնտի գրեթէ բոլոր արարքները վտանգաւոր են, եւ ոեւէ ծնողք պիտի չուզէր զանոնք իր գաւազներուն սորվեցնել իրեն ընտանեկան արժէքներ:

Արդեօք քննադատներ կ'ուզեն, որ ձէյմս Պոնտի տիպարը խոնարհի՝ բարոյական բոլոր արժէքներուն դիմաց: Այդ պարագային ան պէտք է դադար սիրահետել, վատ մարդիկը սպաննել եւ մարթինի խմել: Պոնտի յաջորդ ժապաւէնին համար անոնք հաւանաբար պիտի առաջարկէին ամուսնութիւն մը, երկու գաւազներ եւ բնակարան մը գնելու մուրհակներ: Այս հաշուով՝ Պոնտ պիտի կորսնցնէ իր համակիրները, գրաւորութիւնը եւ իր «Էսթրլի Մարթին»ը, ինչպէս նաեւ՝ յարգանքը իր թշնամիներուն, որոնք ամէն պարագայի պիտի ուզէին սպաննել զինք՝ հակառակ իր վերանորոգ արժանիքներուն:

Բիրս Պոնտին, սիկարի սիրահար մը, 1995ին «Կոլտըն ալ» ժապաւէնին մէջ Պոնտի տիպարը մարմնաւորելու առիթով յօտարած է ձիւնը պատճառին վրայ: Համաձայնութիւնը անխախտ մնացած է մինչեւ նորագոյն ժապաւէնը: Սակայն «Տայ էնատըր տէյ»-ը կը պատկերէ տեսարան մը Քուլպայի մէջ: Երբ Քուլպա եւ Պոնտ կը հանդիպին, կ'ուսննաք բրիտանացի լրտես մը, որ սիկար կը ծխէ: Այս է ամբողջը:

(ՅԱՊԱՒՈՒԱԾ)

ԱՅՈՒ ԵՒ ՈՉ, ԵԹԷ ԵՒ ԲԱՅՅ
Միխայիլի դէմ բուռն պայքարով յատկանշուած ներկայ ժամանակներու սիկար ծխողները չեն սիրուած, եւ ոչ ոք պարտաւոր կը զգայ ինքզինք անոնց ծուխով թունաւորելու կարգապէս յարգելու համար անոնց հաճոյքի իրաւունքը: Այսուհանդերձ՝ ծխողներ կրնան աւելի բարեացակամ վերաբերումի արժանանալ, եթէ յարգեն չծխողներուն տրամադրուելը:

ՈՒՐ ՊԵՏԵՔ Է ԾԽԵԼ
Սիկար ծխելու փափկանկատութիւնը հաշուի կ'առնէ այն մարդիկը, որոնք չեն սիրեր սիկարը, անոր ծուխն ու ծխողները: Չկայ աւելի կոպիտ բան, քան սիկարին ծուխով շրջապատը ապականելը: Միշտ պէտք է յարգել տան մը կամ ճաշարանի մը մէջ չծխելու օրէնքը, արտօնութիւն խնդրել եւ պատրաստ ըլլալ պատշգամը կամ պարտեզին մէջ ծխելու:

ԻՆՉ ԽՄԻՉՔ ՊԵՏԵՔ Է ԽՄԵԼ
Խոհարարներ եւ նրբաճաշակ քիմքի մասնագետներ տարիներ շարունակ փորձած են սիկարներու յարմար խմիչքներ ընտրել: Աւանդական նախասիրութիւններ են՝ գինի, պտուղի հիւթերով ոգելից ըմպելիները եւ բոնետաք: Տաք օրերուն պաղ գարշուրը եւ հաճելի է: Իսկ անոնք, որոնք չեն սիրեր ոգելից ըմպելիները, կրնան փորձել լաւ պատրաստուած չսփրեսսօ սուրճ կամ թարմ պտուղի հիւք:

ԻՆՉ ԸՆԵԼ ՄՈՒՆԻՐԸ
Սիկարին մոխիրը նախապաշարուածներով լեցուն է: Ոմանք կը հաւատան, թէ աճիկ կը ծառայէ իբրեւ տեսակ մը ջերմութիւն հակակշռող գործիք, որ սիկարը աւելի երկար ժամանակի վրայ կ'այրէ: Սակայն իրականութեան մէջ մոխիրը ոչ մէկ դեր ունի, բացի սիկարին որակը ցոյց տալէ: Նրկար եւ համաչափ մոխիրը ընդհանրապէս ապացոյց է ձեռքով շինուած լաւորակ սիկարի: Սակայն զայն շատ երկարելը յանձնարարելի չէ: Աւելի լաւ է սիկարը դնել մոխրամանի մը մէջ, որպէսզի մոխիրը բնական ձեւով իյնայ:

ՉԵՐ ԾԽԱԾ ՍԻԿԱՐԸ ԻՐԱՊԷՍ ԳՈՒՊԵՅԻ ՄԵՋ ԾԽՆՈՒԱԾ Է
Անցեալին սիկարի մը վրայ արձանագրուած հեքօ ա մանօ բառերը կը նշէին, թէ սիկար մը ամբողջութեամբ ձեռքով շինուած էր, իսկ հեքօ ա Քիւպա բառերը մեքենայով շինուած ըլլալու ցուցանիչ էին: Այսօր այս բացատրութիւնները փոխուած են. հեքօ ա մանօ արձանագրութիւնը կրնայ նշանակել, թէ միայն սիկարին արտաքին կեղծը ձեռքով փաթեթուած է, մեքենայով պատրաստուած միջուկի մը շուրջ: Թոթալեմենթէ ա մանօ բացատրութիւնը կը փաստէ սիկարի մը ամբողջութեամբ ձեռքով շինուած ըլլալը:

ՊՈՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿՐ ՎԱՅԵԼԻՆ ԼՈՆՏՈՆԻ ԵՒ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ: Ուր ճաշէն ետք սիկար ծխելը նորածնութիւն էր: Լոնտոնի մէջ յայտնուեցան սիկար ծխելու սենեակներ, որոնք կը կոչուէին տիվան, իսկ եւրոպական երկաթուղիներու վրայ սկսան երթեւեկել «ծխողներու վակոններ»: Միջուկ յատուկ մետաքսէ բաճկոններ նորածնութիւն դարձան, առիթ տալով, որ մարդիկ «ծուխի ու մոխիրի» բաղնիք մը առնեն՝ առանց ծուխի գարշահոտով ապականելու իրենց շքեղ հագուստները: Միջուկ բաճկոնը վերածուեցաւ թիւքսետոյի, գոր Ֆրանսացի մինչեւ այսօր կը կոչեն լը սմոքիկ: Ֆրանսան մինչեւ այսօր կը մնայ աշխարհի ամէնէն աւելի սիկար սիրող երկիրներէն մէկը:

Միացեալ Նահանգներու տարածքին սիկար ծխելու սովորութիւնը ընդհանրացած է քաղաքացիական պատերազմէն ետք, երբ բազմաթիւ ամերիկեան ընկերութիւններ սիկար արտադրած են Ամերիկայի մէջ մշակուած տերեւներով: Սիկարն ու ամերիկեան քաղաքականութիւնը երկար ժամանակ է ի վեր կապուած են իրարու: Քուլպայի գրագէտ եւ յեղափոխական Ոտոէ Մարթի 1881էն 1895 ապրած է Նիւ Եորք: Երբ ան ի վերջոյ Քուլպա վերադարձած է զայն ազատագրելու համար Սպանիոյ լուծէն, վայելած է զօրակցութիւնը սիկար շինող հազարաւոր քուլպացիներու, որոնք խոյս տուած էին դէպի Քի Ուէսթ եւ Թամպա: Յեղափոխութեան ծրագիրը Քի Ուէսթէն Հաւանա ուղարկուած էր սիկարի մէջ փաթեթուած: Այս առաջին յեղափոխութիւնը յաջողութեամբ պսակուած էր նախագահ Թետի Ռուզվելթի եւ Սան խուան Բուրիոյ վրայ ամերիկեան ուժերու ներկայութեամբ, թէեւ Մարթի գոհուած էր եւ այժմ կը համարուէր Քուլպայի ճորճ Ուաշինգթոնը: 60 տարի ետք, 1955ին, երբ Քասթրոն բանտարկուած էր Այլ աֆ Փայնզի մէջ, անոր զօրակցները գաղտնի տեղեկութիւններ կը փաթեթէին սիկարի մէջ եւ զայն կը հասցնէին բանտ:

Միացեալ Նահանգներու մէջ 20րդ դարու սկիզբը տարեկան 4 միլիոն սիկար կը սպասուէր: 1920ին թիւր բարձրացած էր 7 միլիոնի: Ոեւէ մէկը կրնար գտնել մատչելի գինով եւ հաճելի համով սիկարներ: Ամէն ինչ փոխուեցաւ 1963ին, երբ Միացեալ Նահանգներ տնտեսական պատժամիջոցներ սահմանեցին ինքզինքին Միութեան հետ իր կապերը ամրապնդող Քուլպայի դէմ, որ սիկարի գլխաւոր արտադրիչն էր: Կ'ըսուի, թէ նախագահ Քենեդի նախքան Քուլպայի դէմ տնտեսական արգելք ստորագրելը՝ իր մտմով քարտուղարին պահանջած է հազար հատ կարճ Ուիսման սիկարներ գնել: Չանոնք ստանալէ ետք ան գոհունակութեամբ ստորագրած է Քուլպային բոլոր տեսակի սիկարներու ներածումին դէմ արգելքը, որ ի գործը կը մնայ մինչեւ այսօր: Հաւանայի սիկարներու ներածումին արգելքը պատճառ

դարձաւ Քուլպայի մէջ սիկար շինողներու արտագաղթին եւ մրցակցութիւնը սրեցաւ Տոմինիքան Հանրապետութեան, Հոնտուրասի եւ Հարաւամերիկեան այլ քաղաքներու մէջ որակաւոր սիկար արտածող գործարաններու միջեւ:

ՍԻԿԱՐԻ ԱՐՈՒԵՍ

Գեղարուեստական շնորհ կը պահանջէ նոյնիսկ ամէնէն պարզ սիկարի փաթեթելը եւ վարպետութիւն՝ ֆիլիւրատո մը կամ յատուկ ձեւով սիկար մը փաթեթելը: Բրգաձեւ կամ բարակ ծայրամասերով սիկարներ փաթեթելը մ ար տ ա հ ր ա է ի կ'ուղղէ նոյնիսկ ամէնէն վարպետ փաթեթողներուն: Քիչեր միայն կարողութիւնը ունին տարօրինակ ձեւով սիկարներ փաթեթելու՝ իբրեւ արուեստի գործեր, որոնք հաւանաբար երբեք չեն վաճառուին: Նկարներուն մէջ կ'երեւին ծխամորճի ձեւով եւ պէյսպալի գաւազանի ու գնդակի ձեւով սիկարներ:



ԱՄԵՆԵՆ ԵՐԿԱՐ ՍԻԿԱՐԸ

Քուլպացիք տակաւին կը սպասեն, որ Հաւանայի մէջ անցեալ Նոյնմբերին ցուցադրուած աշխարհի ամէնէն մեծ սիկարը ընդունուի մրցանիշներու «Կիլես» գիրքին մէջ: Աշխարհի ամէնէն երկար, ամէնէն կարճը եւ ամէնէն գէշ կերպով փաթեթուած սիկարը հետաքրքրութիւն ստեղծած է Փարթիական վաճառատան մէջ ծխողներու հաւաքոյթի մը ընթացքին: Սակայն նոյնիսկ սիկարի մոլիներ պիտի չկարենան ծխել զայն, անկախ այն իրողութենէն, որ հաւանաբար 3 կամ 4 օր անշարժ պէտք է նստին զայն ամբողջութեամբ ծխելու համար:

Ոտոէ Քասթիլար Քայրօ 13,5 մետր երկարութեամբ սիկարը շինած է երկու օգնականներու հետ, մէկ շաքեղուան ընթացքին եւ Քուլպայի պատկերասփիւռէն ելոյթի մը առիթով ըսած է, թէ «կարելի է զայն ծխել»:

Սիկարը ցուցադրուած է փայտէ սնտուկի մը մէջ, որուն մէկ կողմը պատուհան մը բացուած է: Բազմաթիւ ամերիկացիներ փափաք յայտնած են գնելու փոխարակաւաքի երկարութեամբ սիկարը կամ անոր մէկ նամանակը, սակայն արդեօք անոնք մտածած են, թէ ինչպէս զայն պիտի անցրեն ամերիկեան մաքսատուներէն...

Պատասխանելով
L. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հեռաձայն թիւերու. 258526, 260115 եւ 241274:

ԴԵՊԻ ՔԱՐՎԱՃԱՌ

Շարունակում՝ 4րդ էջէն

Երեւման խաչի օրը, կամ վարդանանցին, Աւագ Հինգշաբթիին... Հիմա ո՞վ Ս. պատարագ կը մատուցանէ անոնց յիշատակին: Ու պիտի գա՞յ օրը, երբ այդ սուրբ անունները պատերու վրայէն պիտի քայնն, նորակառոյց եկեղեցիներու խորանները պիտի բարձրանան եւ այնտեղէն ալ պիտի յիշուին առ Աստուած: Ու այն ատեն պիտի գիտնանք՝ թէ քանի՞ քանի պատարագ պարտական ենք մենք անոնց, որոնք իրենց հալալ վաստակը վանքերուն եւ եկեղեցիներուն կտակեր էին... Հող, ագարակ, տուն ու պալատ: Բայց հիմա դմբէթաւոր փոքրիկ եկեղեցւոյ կողքին ենք կանգնած: Դուռը փակ է, ու չեմ կրնար ներս մտնել եւ աղօթել, մինչդեռ այնքան պիտի ուզէի այնտեղ ըլլալ, առանձին, եւ աղօթել իմ միջնակ եղբորս՝ Յակոբին համար, որ 17 Յունիս 1998 թուականին, երբ ես Մշոյ Սուլթան Ս. Կարպետ կ'այցելէի, Պէյրուսի մէջ զոհ կ'ընթար ինքնաշարժի յիմար արկածի մը: Այն ատեն Ամերիկան նոր էր թողեր, շատ բարեկամներ ունէի, եւ փոխան ծաղկեպսակի 3000 տոլար հաւաքուեցրէի: Յարմար նկատեցինք այդ գումարը յանձնել Արմէն Հանրապետեանին, որ պէտք էր նորոգէ այդ գողորիկ եկեղեցին: Հիմա նոր է, որ կը տեսնեմ այդ եկեղեցին, եւ բնա-

կան է, որ յիշէի հէզ եղբայրս: Նոյն այդ մատուցանող կողմը փոքրիկ յիշատակարան մը կայ «Թուրք 1190, ես՝ տէր Գրիգորիս, առաջնորդ Սուրբ Ուխտիս, կանգնեցի խաչս եղբոր իմոյ Սըմբատայ, որդուս» վախճանով: Իր քերականութեամբ, որք երկրպագէ՞ք՝ յաղօթալ յիշեցէ՞ք: Օր մըն ալ, կը մտածեմ, երբ ես ալ հեռու պիտի ըլլամ այս աշխարհէն, պատահական այցելու մը պիտի գայ, այստեղ պիտի կարգայ նման տող մը: «Ես, Մեքսիկայ արքեպիսկոպոս, կանգնեցի խաչս յիշատակ եղբոր իմոյ Յակոբայ, որք երկրպագէ՞ք, յաղօթալ յիշեցէ՞ք, 1998...»: Որքան փոքր է աշխարհը, որքան փոքր է Հայոց աշխարհը, որքան խորունկ է մեր կապը մեր պատմութեան եւ հողին հետ: Այս տպաւորութիւններով կը թողունք Դադիվանքը եւ մտիկ անտառակի մը մէջ, ուրցի ծանր բուրմունքի տակ ընթերցեմ կ'ընենք: «Ճաշակեցողութեան մասին... չնորհիւ մեր հերոսներուն՝ ահա մենք, բաց դաշտի մէջ, խաղաղութեամբ կը վայելենք արցախցու հացը: Ողորմի մեր հերոսներուն, փառք մեր հերոսներուն: Միջնադէպ կը փորձենք հասնիլ Քարվաճան: Վաղը երկար ճամբայ ունինք կատարելիք: (Շար. 2)

ՃԱՏՐԱԿ



1 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՆԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՓՈՒՄՈՎ

ԱՆՏԵՐՈՒՆ ԼՆՏԵՐ (2002)

2 ՍԵՒԵՐԸ ԿԸ ՆԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՓՈՒՄՈՎ

ՄՈՐԻՍ Գ. - ՎՈՂԱ Ա. (2002)

3 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՆԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՓՈՒՄՈՎ

ՆՈՒՍԵ ՓԱԽՍԵՆԸ (2002)

4 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՆԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՓՈՒՄՈՎ

ԶԱՎԵՑ ՎԱՅՍԸՆ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ՅՈՒՆ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Ատենէ մը ի վեր կ'երթայ գնել առարկայ մը, բայց այսօր պիտի չկարենք ձեռք բերել փափաքը իրականացնել. այդ պատճառով քիչ մը պիտի տրամիր: ☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Ձեր որոշած ծրագիրներէն մէկը իրագործելու համար յայտարարեմ պիտի արձանագրուի կամ պիտի ջնջուի: Այդ մասին մի՛ մտահոգուիք, տրամիր մի՛ վերածեք գայն, որովհետեւ այնքան ալ կարեւոր բան մը չէ: ☆ **ԵՐԿՈՒՆ** (22 Մայիսէն 21 Յունիս) Կը կարծեք, թէ չէք հասկցում ձեր շրջանակին մէջ ու այդ պատճառով ճշդութեամբ պիտի կատարեք կարգ մը անձերու մտ: Այսպիսի պարզ բաներու համար չ'արժեք մտահոգուիլ: ☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Երազային կամ անիրակցանալի ծրագրի մը մասին շատ կը մտածեք: Ձեր ուրեքը ամուր դրեք գետին, եղեք իրապաշտ, մոռցեք պատրաստը: ☆ **ԱՌԻՒԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Աշխատանքի մարզին մէջ այն տպաւորութիւնը ունիք այսօր, թէ նստած էք փառաւոր քրոնի մը վրայ ցուցադրուելու համար: Այսօր պէտք է ըլլաք համեստ: ☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Արտասահման բնակարանի մը հետ կապ պիտի ունենայ այսօր: Կամ՝ երկար ատենէ ի վեր ձեր չտեսած անձը պիտի տեսնեք եւ պիտի ուրախանաք: ☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Ամուսն կ'էր հազիւ հասած՝ արդէն ունիք տնտեսական, պիտե՞ք ի տագնապ: Այսօր լուծում մը պէտք է գտնեք այս կացութեան դուրս գալու համար: ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Կը կարծեք, որ ամէն մարդ երջանիկ է, իսկ դուք՝ շատ ետ մնացած: Ասիկա անհիմն մտածում մըն է, գոր պէտք է վաճեք ձեր միտքին: ☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Ուրիշին հաշուոյն դուք ձեզ պիտի գրկեք պաշտօնէ մը, գոր կը սիրեք եւ սիրուած էք ձեր գործին մէջ: Անձնուրացութեան գեղեցիկ ոգի մը ունիք, բայց... ☆ **ԱՅՅԵՆՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Եթէ հասկացողութիւն եւ վստահելիութիւն ցոյց տաք այսօր, ձեր շուրջ գտնուող անձեր կամ նոյնիսկ ձեր գաւակները ձեզի պիտի վստահին իրենց գաղտնիքները: Բայց ձեր կարգին պէտք է գիտնաք զանոնք պահել, ըլլալ գաղտնապահ: ☆ **ԾՈՎԱՆՈՅՑ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Տան մէջ ձախարհութիւն պիտի տեսնուի, ամէն գործ հակառակ արդիւնք պիտի ստացի, պիտի ունենաք հեքիաթ եւ անկախ պահեք, եւ պարզապէս՝ ժամանակի կորուստ: Համբերուի՛ր... ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Եթէ ունիք թելադրանքներ ունէ մէկուն, զանոնք ըրեք յստակ եւ ճշգրիտ, ապա թէ ոչ անոնք պիտի չլսուին, պիտի չյարաբարին:

www.aztagdaily.com

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5323 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՒԿՆԱԿԱՆ	ՈՒՂԱԿԱՅԵՍ
1. Կառուցողական աշխատանքի մասնագէտ:	1. Վահագն Դաւիթեանի երկերէն՝ «... Սրտի Միջոց»:
2. Փորձանք - Մասնիկ:	2. Ճիւղ - Հաստատական պատասխան:
3. Յուզական անական - Մեռելահարգող:	3. Այրուրբներէն - Կօշիկ:
4. Աղալու ցորեն - Բոսոր:	4. Պոչ - Շամբ:
5. Դակիչ - Շողակ:	5. Արական անուն - Լեզուով մը՝ այր:
6. Ատոմ Եարմանեանի ծննդավայրը - Ֆրանսայի շրջաններէն:	6. Պսպղուն աղամանը:
7. Ցաւի ճիւղ - Վէրքի կեղեւ:	7. Իսլամական տօններէն - Դազաղ:
8. Յովսէփ Էմիլիի ծննդավայրը - Այրուրբներէն:	8. Լիբանանի քաղաքներէն - Կէս՝ ձանձրութիւն:
9. Բայական ժամանակ:	9. Փոտութիւն - Կոպիտ:
10. Հաւալուսն, պեղական - Բուսական մածուցիկ նիւթ:	10. Կապոց - Վահան Թէքեանի երկերէն:

ԹԻՒ 5322

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Պ	Ր	Մ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ե	Ր	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ր	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍ / ԶԲՕՍԱԸՆԴՈՒԹԻՒՆ

«ՏԱՐԱԺ ԱԼ ՖԱՆ»Ի ԿԱՂԱՆԳԻ ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍԸ

Անցնող ամիսներուն իր ունեցած յարգողութիւնն իսկապէս ժամանակակից «Սէն Նիքոլա» եկեղեցւոյ մօտ աստիճաններուն վրայ կազմակերպուող «Տարած ալ ֆան» արուեստի ցուցահանդէս-վաճառքը կը վերադարձայ իր համակիրներուն՝ այս անգամ տօնական օրերու նախօրեակին ներկայացնելով «Կաղանդի ցուցահանդէսը»:

Դէ կ'ուզէք ամսուան ընթացքին ամէն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, այցելուներ ընդունող այս իւրայատուկ ցուցահանդէսը, յարմարելով տօնական օրերու մթնոլորտին, ընդարձակած է իր տարողութիւնը եւ կ'ընդգրկէ Կաղանդի ու Նոր Տարուան պարզաբանութիւնը ու նուէրներու հաւաքածոյ մը՝ իրագործուած այս մարտի արուեստագէտներու կողմէ:



Յուցարարութեան եւ վաճառքի շնորհիւ իսկապէս փայտէ եւ այլ նիւթերէ պատրաստուած Կաղանդի պարներ, մուսիկային, մայրիկ փայտէ պատրաստուած իրանական թեմաներով իրեր, ինչպէս նաեւ լիբանանեան արուեստի օրինակներ:

Բնականաբար «Տարած ալ ֆան»ի Կաղանդի ցուցահանդէսին մէջ կարեւոր բաժին մը կը գրաւեն գեղարուեստի օրինակները: Այս ցուցահանդէսին կը մասնակցին շուրջ քառասուն կերպարուեստագէտներ, որոնց շարքին՝ Անտրէ Գալֆայեան, Շահէ Տէր Պողոսեան, Զորիսի Պայրաւեան, Յարութ Ստեփանեան, Իրա Պայրաւեան, Մարայ Տէր Պողոսեան, Միլիա Չազարեան եւ Միլիա Չազարեան:

Նշենք, որ «Տարած ալ ֆան» կարելի է այցելել ժամը 16:00էն 20:00:

Եւ. Գ. Է. 15:30 - Արաբական ֆիլմաշար 13:35 - Non stop 13:45 - Նորածնութիւն 13:55 - Նորաստեղծ 14:00 - Լուր 14:05 - Բաց նախագծի շրջանակներում 15:00 - Հայրեր 15:20 - Մուսուլմաններ «Լեռնային» 15:45 - Մուսիկ օգնութեան դասընթաց. Մուր որովայն 16:00 - «Սիրոյ կախարհանք» 17:00 - Մարգարէի արքայ 17:30 - Կարծիք

Ե. Գ. Է. 15:00 - Լուրեր 15:30 - Միզապ Լուսնայան

17:30 - Մինեմա/35 mm. 18:00 - Վաւերագրական 19:00 - Լուրեր 20:00 - Մաքաֆիա 20:30 - Մարգարէի յայտագիր 22:00 - Այմասիա 23:00 - Պուրա, իթիսա, թարս 23:30 - Թաքիք ալ ետու

ՆՈՒ Թ. Վ. 7:30 - Դասական երաժշտութիւն 09:00 - Սապահ էլ ուարտ 13:30 - Լայթ ինկ 14:30 - Լուրեր 15:00 - Վաւերագրական 15:30 - Կենդանի գծանկար 18:00 - Մահա ու սահուս 20:30 - Արաբական ֆիլմաշար 22:00 - Ամերիկեան ժապաւէն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒՍԱՍՏԵՍՈՒԹԻՒՆ 06:00 - Մուսիկի ծրագիր 08:30 - Մայր թատրոն-80. Ժան Էլոյեան 09:05 - Հնոստանեակցի զարթիչ Մուսուլմաններ «Եւ այլ կամ նոր Գիտնական», «Գիտնական սարբ խեր է» 11:00 - Հայրեր 11:20 - «Հորով էր» 12:00 - Լուր 12:05 - Non-stop 12:20 - Եթէ, իրօք... 12:30 - Non stop 13:00 - Լուր 13:05 - Մէկի խորանարդ

ՀՆՈՒՍԵՍԻՐԸ

Թ. Է. Է. 8:30 - Թալալ Դաս 9:00 - Սապահ 12:00 - Եթէ, իրօք... 12:30 - Դանիի զրնայէ 13:00 - Մարտի Հանա 14:00 - Ետրոնիկ 14:30 - Լուրեր 15:00 - Մշտուար 17:00 - Ամերիկեան ֆիլմաշար 18:00 - Կենդանի գծանկար 18:30 - Այու Մըրիմ 19:30 - Լուրեր 20:15 - Մոտեչիտ 21:00 - Սահա Ղէյր 2ԲԲԸ Ե. Գ. Ս. Է. 7:00 - Ս. Է. Է. Է. Է. Է. Է. 7:30 - Նէքսթ Ս. Է. Է. Է. 08:25 - Մա ըլաք իլլա Հայֆա 09:00 - Լէրի Բիկ Լայլ 10:00 - Էծիս սիրոք 20 10:30 - Նահարքում սայիտ 11:30 - Փէիֆթր պլու 12:30 - Չառայա 13:00 - Մորելիա 14:00 - Հիստա ալ մաուսաւմ 15:00 - Լուրեր 15:15 - Թի թայմ 16:45 - Կաղանդի յայտագիր 18:30 - Մըն Էծրլ Էլէնա 19:30 - Մննդեան յայտագիր 20:35 - Ամերիկեան ժապաւէն «Ճիւղեր» 22:30 - Ուէք ուիկկ ՄՈՒՍՍԵՊԱՆ 7:00 - Լուրեր 8:30 - Ալմ ալ սապահ 11:00 - Խոհանոց 12:00 - Լուրեր 12:05 - Արաբական ֆիլմաշար 13:05 - Ճիւղեր քրէք 14:00 - Անգլերէն լուրեր 14:20 - Յրանսերէն լուրեր 14:40 - Հայերէն լուրեր 15:00 - Լուրեր

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՄԱԿ ԱՆՍԱՍՆԵՆԵՐԸ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԸ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՐԱՔԵՒԱՍԻԱԿԱՆ ԱԶԳԵՐՈՒ ԲԱՆԱՁԵՒԸ

ՄԻՍԵՆԱ ԱԶԳԵՐ, 14 (ԱՅՓ).- 26ի դէմ 27 բուեով եւ 4 ձեռնպահութեամբ, քաղաքական յանցանքները մերժեց Թուրքի վերաբերեալ արաբական կամ բանաձեւի այն պարբերութիւնը, որ «Ֆրանսական կառավարութեան կը խնդրէ անյայտ թուրքի մէջ ապահովել բնականոց պայմաններ, ինչպէս նաեւ քաղաքացիական բնականոց ազատութիւններ»:

Միւս կողմէ, 25ի դէմ 28 բուեով եւ 5 ձեռնպահութեամբ, յանցանքները մերժեց այն պարբերութիւնը, որ կը յանձնարարէ «բանակցութիւններու վերակարգման ծրագրի կառավարութեան եւ Թուրքի ժողովուրդին իսկական ներկայացուցիչներուն միջեւ՝ բանակցութիւնները կազմակերպելու եւ դիւրացնելու համար, 2) յայտարարելու, թէ Թուրքի ներկայ կացութեան երկարաժամկէտ վտանգ մըն է իրաւարարական յանցանքները մերժելու քաղաքացիական յանցանքները մերժելու, 3) Ֆրանսական կառավարութեան խնդրելու, որ անյայտ բնականոց պայմաններու քաղաքացիական բնականոց ազատութիւնները ստեղծէ Թուրքի մէջ, 4) Թուրքի հարցը ներկայացնելու Լեզիանուր ժողովի յատուկ կազմակերպչական շրջանին:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՂԱՔԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԻՐԵՆՑ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Լիբանանի պասեթպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, Շաբաթ օր, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբը ի վերջոյ յաջողեցաւ արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը, յաջորդական չորս պարտութիւններէ ետք:

Թատտոտի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ 81-65 արդիւնքով պարտութեան մատնել Լիբանանի բանակի հաւաքականը: Ա. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. տասը կէտի առաւելութիւն մը ունէր իր մրցակիցին վրայ (37-27):

Հ.Մ.Ը.Մ. յաջորդ մրցակիցն է Ֆիտաս Սայտա: Մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հինգշաբթի, Հ.Մ.Ը.Մ.ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ:

● ԼԻԲԱՆԱՆԻ պասեթպոլի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Երեքշաբթի, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի կազմը կը ճակատի Անդրանիկ Սին էլ Ֆիլի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Սափէսի ժողովարանի դաշտին վրայ, ժամը 20:00ին:

ՔԱՆՉԻՕ

ՄԻԼԱՆՕ ՔԱՂԱՔԻ ԵՐԿՐՈՒ ԽՈՒՍԲԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Իտալիոյ Ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիո) 14րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ա. Սէ. Միլան ամրապնդեց իր դիրքը, երբ 2-1 արդիւնքով յաղթական վերադարձաւ վերջին դիրքը գրաւող Բոմոյի դաշտէն: Մասիմո Ամպրոսինի (20րդ) եւ Անտրէյ Շեվչենքո (42րդ) նշանակեցին յաղթական կազմին երկու կողմը:

Միլանը քաղաքի երկրորդ խումբը եւս՝ Ինթէր, իր կարգին յաղթանակ մը արձանագրեց «Սան Սիրո»ի մէջ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Աթալանթան, շնորհիւ Մոհամէտ Քալոնի (Սիբերա Լէոնէ) նշանակած կողմին (70րդ):

Ա. Էս. Ռոմա արձանագրեց եղանակի իր չորրորդ յաղթանակը, իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Ռեմինան: Արթանթինցի Ուոլթըր Սամուէլ (3րդ), Ֆրանչեսքո Թոթի (24րդ) եւ Վինչենցո Մոնթելա (70րդ), նշանակեցին Ա. Էս. Ռոմայի կողմը:

Պրեշիա 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Փերուճիան, առժամաբար հեռացաւ վտանգաւոր գոտիէն: Ցաղթական կազմին երրորդ կողմը նշանակեց Ռոպերթո Պաճիո (88րդ) փենալթիով:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՅՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. - ՌԱՍԻՆԿ՝ 4-0



Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները, որոնք երէկ լեցուցած էին դաշտին թրիպիւնները

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 7րդ հանգրուանին, երէկ, Պուրճ Համուտի Բաղաբապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. իր բազմահազար համակիրներուն ներկայութեան արձանագրեց եղանակի իր վեցերորդ յաջորդական յաղթանակը, այս անգամ պարտութեան մատնելով Ռասինկը՝ 4-0 արդիւնքով:

Մրցումին սկիզբէն մինչեւ վերջ, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները իրենց տիրապետութեան տակ պահեցին մրցակիցը, որ տակաւին բախտաւոր դուրս եկաւ միայն չորս կողմ ստանալով, որովհետեւ անոնց թիւը կրնար կրկնապատկել ըլլալ, եթէ Ռասինկի բերդապահ իր բերդը չփրկէր քանի մը ստույգ առիթներէ, իսկ անոր բերդին սիւներն ալ երկու անգամ գնդակը չզսպէին...

Մրցումին 25րդ վայրկեանին, Հ.Մ.Ը.Մ. նշանակաւոր անդին կողմ: Ճոնի Բուլթանիի մէկ կողմնակի փոխանցումին

վրայ՝ մրցակից կազմին մէկ յետսապահը գնդակը զետեղեց ինքն իր բերդէն ներս:

60րդ վայրկեանին վարդան Ղազարեան, խաղի բերելէ ետք քանի մը յետսապահներ եւ բերդապահը, գնդակը զետեղեց Ռասինկի բերդէն ներս:

92րդ վայրկեանին, վարդան դաշտին կէսէն յառաջանալով անգամ մը եւս ցնցեց Ռասինկը բերդին ուսկանը: Իսկ կորսուած վայրկեաններուն դարձաւ 94րդ վայրկեանին, Հ.Մ.Ը.Մ. ձեռք ձգեց փենալթի մը, զոր կողմի վերածեց խմբապետ Դրո: Երէկուան մրցումին, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները իրենց ներկայութեամբ արձանագրեցին նոր «մրցանիշ» մը, երբ պատուով իրիպիւնին աջ եւ ձախ կողմերը ամբողջութեամբ լեցուցին: Անոնք փաստեցին, որ ամէն գնով կը մնան խումբին կողքին եւ Հ.Մ.Ը.Մ.ի փոքրախումբին ընկերակ:

ցուցեամբ, պահ մը օտար թղթակիցներուն մօտ ձգեցին այն տպաւորութիւնը, թէ Ա. դասակարգի ախոյեանութեան մրցում մըն է, որ տեղի կ'ունենար:

8րդ հանգրուանին Հ.Մ.Ը.Մ.ի մրցակիցն է Թատամոն Նապաթիէ:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ռիատա Ուալ Ատայ - Թատամոն Նապաթիէ 2-1
Շապապ Թրիփոյի - Նահտա Պար Էլիաս 1-0
Հ.Մ.Մ. - Ահի Սայտա 2-0
Հ.Մ.Մ. - Ռասինկ 4-0
Մաժտայ Այննար - Իժիմանի 2-1
Իսլամ Պրոժ Եիմալի - Շապապ Էլիաս 0-0

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԵՅԸՐՈՉԻ ՆԱՅԱՆՋԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԷՆ. ՊԻ. Էլ.ի մրցումներուն, անցեալ Շաբաթ օր, Լու Անճելլա Լէյքըրը կրեց այլ պարտութիւն մըն ալ, երբ Նիւ Օրլինսի պարտուեցաւ 98-82 արդիւնքով: Երեք անգամ ԷՆ. ՊԻ. Էլ.ի ախոյեան հանդիսացած Լէյքըրը, որ ցարդ կրցած է միայն ինը յաղթանակ արձանագրել, այսպիսով կրեց եղանակի իր 15րդ պարտութիւնը:

Պոսթըն Սելթիքս կարելոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 113-90 արդիւնքով պարտութեան մատնեց Նիւ Եորք Նիքսը:

Ստորեւ՝ շաբաթավերջին արձանագրուած մրցումներուն արդիւնքները:

- Սիէթլ Սուփըրսոնիքս - Թորոնթօ Ռեփթըր 91-79
- Ֆէօնիքս Սանյ - Ֆիլադելֆիա Սիքսըրս 99-91
- Պոսթըն Սելթիքս - Քլիվլենտ Քաւալիըրս 115-100
- Ինտիանա Փէյլըրս - Տենսիք Նակեթց 94-72
- Օրլանտօ Մէճիք - Կոլտըն Սթըյթ Ուորիըրս 111-85
- Նիւ Եորք Նիքս - Մայեմի Հիթ 97-92
- Նիւ ձըրպի Նեթց - Ուաշինկթըն Ուիլըրս 79-65
- Միլուոքի Պաքս - Փորթլենտ Թրէյլ Պլէյըրս 101-79
- Սան Անթոնիօ Սիքսըրս - Լու Անճելլա Քլիփըրս 97-84
- Մեմֆիս Կրիպիլս - Հիւսթըն Ռոքեթց 114-109
- Նիւ Օրլինս - Լու Անճելլա Լէյքըրս 98-82
- Կիւրուս - Ֆէօնիքս Սանյ - Աթլանթա Հոքս 102-88
- Տիբոնիքս Փիսթըրս - Սիէթլ Սուփըրսոնիքս 91-78
- Պոսթըն Սելթիքս - Նիւ Եորք Նիքս 113-90
- Քլիվլենտ Քաւալիըրս - Տենսիք Նակեթց 111-104
- Լու Անճելլա Քլիփըրս - Հիւսթըն Ռոքեթց 94-83
- Տալաս Մավըրիքս - Մեմֆիս Կրիպիլս 104-87
- Փորթլենտ Թրէյլ Պլէյըրս - Միլուոքս Վուլվս 98-92
- Մայեմի Հիթ - Կոլտըն Սթըյթ Ուորիըրս 101-92

ԱՐԴԵՆ ԻՍԿ ՍԿԱԱԾ Է
«ԱՐԲԱԼԵՆ» - Հ.Մ.Ը.Մ. ՍԱՐՁԱՄԱՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՔԵՆ ՆԵՐՍ

◆ AEROBICS ◆ STRETCHING ◆ TAEBO

Մամրամասնութիւններու համար անձամբ ներկայացնալ համալիրի տնօրէնութեան, առաւօտեան ժամը 10:00էն 1:00 եւ կէսօրը ետք ժամը 5:00էն 9:30, կամ հեռաձայնել նոյն ժամերուն 04 - 7 22902/3 թիւերուն:

ՏԵՕՐԵՆՈՒԹԻՒՆ

White-Westinghouse®

Մայքրօուէյվ Մայքրօ գիներով

Վճարումը՝ կանխիկ

Պուրճ Համուտ - Քաղաքապետ. հրապարակ ԳԵՈՂԱՉՅՆ՝ 01-241000
2րդ մուտք. Սանթըր Պլանթըյն: Կառատունց ապահովուած:

ԿՈՒՉՈՒԻ

● Հաստատութիւն մը կարիք ունի փորձառու հաշվապահ քարտուղարուհի մը, ֆրանսերէն, արաբերէն լեզուները եւ համակարգիչ գիտնալը պայման, վճարումի լաւ պայմաններով: Դիմել հեռ. 01-201937:

ԿՈՒՉՈՒԻ

● Electro - mechanical engineeringի ընկերութիւն մը կարիք ունի քարտուղարուհի մը՝ 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն եւ արաբերէն գիտնալը եւ նոյն լեզուներով համակարգիչ գործածել գիտնալը պայման է: Հեռ. 01-378801-5 եւ 03-816189 թիւերուն:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱԿԱԳՈՅՆ ՆՈՒԲԸ

Sacoche ساكوش

ՈՐԱԿԱՆՈՐ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

HEUER RADO Switzerland

D&G DOLCI GAMBANA TIME

SEIKO TISSOT Swiss Quality Time

CITIZEN

SECTOR

Պուրճ Համուտ, «Արմենիա» պողոտայ: Հեռ. 266366, 262612:

EURO STYLE

Salon for Men European Specialists

Առաջին անգամ ըլլալով
Լիբանանի մէջ

Haircut+Hairwash+Brushing 12,000 LL
Haircut for kids 8,000 LL
Hairwash+Brushing 5,000 LL
Highlighting 25,000-30,000 LL
Hair Coloring 25,000 LL
Head Massage 8,000 LL
Bain d'huile 5,000-8,000 LL
Permanent Curls 25,000-30,000 LL

Հայկաի կրպարակ. Լայաֆապետարանի դիմաց. **BREEZEALE HOUSE** Méditerranée դրամատան կից, Ա. յարկ. հեռ. : 01 / 892081

Christmas offer
until January 10 - 2003
50 % discount

ԵՐՐՈՊԱՆ ՄԻԱՅՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՂՋՈՒՆՈՒԻ

Ե. Միութեան ղեկավարները եւ մօտ ատենէն անոր անդամ դառնալիք 10 երկիրներ Քոփենհագընի իրենց վեհաժողովին պատմական համաձայնութիւն մը ապահոված են՝ Պերլինի Պատին փուլումէն 13 տարի ետք Եւրոպայի վերամիացնելու համար:

Թէեւ ընդարձակման ճամբուն վրայ խոչընդոտներ կը մնան, Քոփենհագընի վեհաժողովին յաջողութիւնը ողջունուած է Եւրոպայի մէջ եւ անկէ անդին:

Ե. Միութեան ղեկավարները Ուրբաթ ուշ գիշերին համաձայնած էին Մայիս 2004ին ընդլայնելու պլոքը 15 անդամէն 25 անդամներու՝ ընդունելով Կիպրոսը, Չեխ Հանրապետութիւնը, Էսթոնիան, Հունգարիան, Լատվիան, Լիթվանիան, Մալթան, Լեհաստանը, Սլովենիան եւ Սլովակիան:

«Այսօր փակեցինք Եւրոպական պատմութեան ամենէն արեւմտի եւ մութ էջերէն մէկը: Այսօր նոր էջ մը բացինք», յայտարարած է Դանիոյ վարչապետ Անտոն Տոխ Ռասմուսըն Ե. Միութեան ներկայ եւ ապագայ պետութեանց ղեկավարներուն առջեւ:

Թէեւ ընդարձակման համաձայնութիւն մը ապահովելը դժուար յաղթահարելի խոչընդոտներ դիմագրւած է, ամենէն դժուարին բաժինը կը սպասէ 10 թեկնածուները, որոնք հանրաքուէներ պետք է կայացնեն իրենց երկիրներուն մէջ վերջնական դարձնելու համար իրենց անդամակցութիւնը:

ԶԵՐԻՏԵՍ ԹՈՐԻԸ ԿԻՊՐՈՍԻՆԵՐՈՒՆ ԿՈՉ ԿՈՒՂՈՒ

Կիպրոսի նախագահ Կլաֆոս Բլերիտէս, որ ներկայ գտնուած է վեհաժողովին, կոչ ուղղած է թուրք կիպրացիներուն, որ ապահովեն, թէ միացեալ պետութիւն մը կ'անդամակցի Ե. Միութեան:

Ան ցաւ յայտնած է, որ միացեալ Կիպրոս մը չէ միացած Ե. Միութեան:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան կը յուսար, որ 2 կողմերը Քոփենհագընի մէջ ճամբան պիտի հարթեն վերամիացած կողմի մը Ե. Միութեան անդամակցութեան՝ ընդունելով ՄԱԿի մշակած ծրագիրը:

Սակայն մետասաներորդ վայրկեանի բանակցութիւնները ճախողած էին, հակառակ ՄԱԿի պատուիրակ Ալվարո տէ Սոթոյի աշխատանքին եւ միջազգային ճնշումներուն, թէեւ երկու կողմերը համաձայնած են բանակցութիւնները շարունակել՝ Անանի ծրագիրը հիմունքներով:

(ԱՅՓ)

ԵՐՐՈՊԱ ԽԻՍՏ ԶԱՅՐԱՑԱԾ ԹՈՒՐԻՏԻՈՅ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ...

Շարունակուած Ա. Էջէն

Հակադարձելով Ե. Միութեան որոշումին՝ Սպիտակ Տան բանբեր Արի Տլաշըր յայտնած է, թէ դէպի Եւրոպա «Թուրքիոյ շարունակուող եղափոխութիւնը ցամաքամասին եւ աշխարհին ցոյց կու տայ, թէ իսլամաւեթիւնն ու ժողովրդավարութիւնը լիովին կը համընկնին իրարու»:

Մինչ այդ, Թուրք ղեկավարներ Շարաֆ օր յայտարարած են, թէ Ե. Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ բարեկարգումներուն պիտի դիմեն: «Թուրքիա յառաջիկայ 10 տարիներուն պիտի շարունակէ դէպի առաջ ընթանալ առաւելագոյն վճռականութեամբ՝ աւելի ուժեղ կերպով մուտք գործելու համար Ե. Միութեան ներս», ըսած է Էրտողան:

(ԱՅՓ)

ՎԱՀՐԱՄ ԳԱՅՖԷՃԵԱՆ...

Շարունակուած 6րդ էջէն

1924 թուականից մինչեւ իր մահը (1961 թ.) ապրեց Երեւանում՝ համեստ Երեւանում՝ համեստ մանկավարժի եւ նկարչի կեանքով: Մոսկուայում, Ս. Փեթերսպուրկում, Ախալցխայում Թիֆլիսում եւ Երեւանում նա ստեղծեց այնպիսի նուրբ գեղանկարներ, որ կարծես ամբողջ կեանքը կրթուել եւ ապրել էր արւեստների մայրաքաղաքում՝ Փարիզում: Գայֆէճեանը ոչ միայն իր ժամանակի զարգացած, այլեւ առաջադէմ մտաւորականներից մէկն էր:

Դեռեւս 1900ական թուականներին ստեղծած գունալի ներդաշնակու թիւնները, որոնք յետ մահու ցուցահանդէսում ներկայացուած էին «Տեքորաթիֆ մոթիֆներ» խորագրով, կամայ թէ վաճառ, առնչուում էին վերացապատմութեանը, որը սահմանա-

ւորուեց 1910 թուականին, երբ Վասիլի Քանտինսքին ջրաներկով ստեղծեց առարկաներից, իրերից գուրկ, սակայն որոշակի տրամադրութիւն արտայայտող առաջին վերացական նկարը: Չափազանց նուրբ եւ թափանցիկ գունաշար ունեն նաեւ Գայֆէճեանի իրապաշտական պատկերները:

Նա բարոյական բարձր ըմբռնումների անհատ է: Ոչ միայն հոգու մաքրութիւն հաղորդեց նա 20րդ դարի հայկական գեղանկարչութեանը, այլեւ իր բազմած թիւ սաներին քարոզեց Աստուծու աշխարհում քրոջ բաւարարուելու, մաքրակենցաղ լինելու, արարչագործութեան հանդէպ ակնածանքով լցուելու բնական իմաստութիւնը:

ԻՄՐԱՅԷԼ ԱՐԱՅԱԹԻ ԿՎՐԳԻԼԷ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԻԼ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԿԵՍ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԲԵԹՂԵՆՄԻ ՄԵՋ

Իւրայելի վարչապետ Արիէլ Շարոն յայտարարեց, որ Արաֆաթի պիտի արգիլուի ներկայ գտնուել Ս. Ծննդեան կէս գիշերուան պատարագին, որ տեղի կ'ունենայ Բեթղեհէմի մէջ: Երկրորդ տարին ըլլալով՝ Արաֆաթի կ'արգիլուի Բեթղեհէմ այցելել:

Իւրայելացի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ կառավարութեան նիստին, Շարոն յայտնած է, թէ իւրայելեան բանակը Բեթղեհէմ պիտի մնայ սուսական օրերուն, հսկելու համար ապահովութեան: Ան աւելցուցած է, թէ Արաֆաթի արտօնութիւն պիտի չտրուի մասնակցելու արարողութիւններուն: Շարոն հաստատած է նաեւ, թէ բանակը պիտի երաշխաւորէ ապահովութիւնը քրիստոնեաներուն, որոնք Բեթղեհէմ պիտի ուղղուին:

ԱՃԻՆԱՍԱՌՈՐԱԿԱՆԵՐԸ ԿԸ ԶՆՆԱԿԵՆ ԵՐՈՒՍԱՂԵՍԸ ԲԱՃՏԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Իւրայելի Աշխատաւորական Կուսակցութիւնը, որ կը պատրաստուի Յունուարի ընտրութիւններուն, երէկ յայտնեց, որ պատրաստ է հրաժարուելու Երուսաղէմի արաբական շրջանէն, որ գրաւուած էր 1967ի պատերազմին: Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Օֆէր Փայնյ ըսաւ, որ Երուսաղէմը պէտք է ըլլայ քաղաք մը, ուր մարդ բնական կեանք մը ապրի: Ան աւելցուց, որ արաբական թաղամասերն ալ քաղաքին մաս պէտք չէ կազմեն: Փայնյ աւելցուց, որ եթէ Երուսաղէմը Իւրայելի յաւերժական մայրաքաղաքը պիտի դառնայ, անհրաժեշտ է վերադարձնել արաբական շրջանները, որպէսզի խաղաղութիւն հաստատուի:

1995էն ի վեր, Արաֆաթ ամէն տարի, 24 Դեկտեմբերին, Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցու մէջ ներկայ կ'ըլլայ գիշերուան պատարագին: Անցեալ տարի, իւրայելեան բանակը արգիլեց Արաֆաթի մասնակցութիւնը:

Արաֆաթի խորհրդատու Նապիլ Ալու Ռուտայնա ընդվզուով ընդունեց յայտարարութիւնը: Ան ըսաւ, որ իւրայելի արարքը ապուշ է եւ հրահրիչ կը նկատուի պաղեստինցի ժողովուրդին համար: Ալու Ռուտայնա աւելցուց, որ Արաֆաթի ներկայութիւնը արգիլելով՝ Իւրայել մարտահրաւեր կ'ուղղէ միջազգային օրէնքին:

Իւրայելացի պաշտօնատարը ըսաւ նաեւ, որ պատճառ չկայ արտօնելու Արաֆաթի ներկայութիւնը արարողութեան մը, որ խաղաղութիւն եւ հաշտութիւն կը խորհրդանշէ, երբ պաղեստինցի ղեկավարը ոչինչ ըրած է ահաբեկութեան դէմ եւ աղէտ միայն բերած է քրիստոնեայ պաղեստինցիներուն:

մը պարագային:

● ՊԱՂԵՍՏԻՆՑԻ Բարձրաստիճան պաշտօնատարներէն Ահմետ Ապտէլ Ռահման ղատապարտեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլի այն յայտարարութիւնը, որ կը պահանջէր պաղեստինեան իշխանութեան փոփոխութիւնը:

● ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ Իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ կոչ ուղղեց «Բախտա» ղեկավար Ռուսա Պըն Լատէանի պաղեստինեան հարցը չշահագործելու՝ իսլամական աշխարհին մէջ փորակցութիւն ապահովելու համար:

● ԻՍՐԱԵԼԿԱՆ Համա շարժումը յայտարարեց, որ պատրաստ է նոր բանակցութիւններու ձեռնարկելու Ֆաթիհ հետ՝ ամրապնդելու համար պաղեստինեան միասնականութիւնը:

(ԱՅՓ)

(ԱՅՓ)



- 1- ՆԱՅԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարուայ մուտքի յատուկ ծրարումով:
2- VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անուոնով գինի նաեւ փայտ ստեղծով:
3- Գոնեաք գանազան անուանատեսակով:
4- Գինի KHORAN 3 լիթր մուտքի տուկով:
5- Գոնեաք Souvenir ԱՂԹԱՍԱՐ 10տարուայ:

VAK Trading Ըստ., Հեռ.: 03/626177 - 03/773609
Եւ UNIVERSE վաճառատուն, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք

Advertisement for PHOENICIA featuring a portrait of a man and text about digital photo services, contact info, and location details.

Advertisement for PHOTO NERSES featuring an image of a photo booth and text about digital photo services, contact info, and location details.

- ՃՆՏՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ
1. 1. Ձh6+ օց8 2. Ձh8# [2. Սh8#] 1-0
2. 1... օց5+ 2. օh4 Ձh2# 0-1
3. 1. Սxց6+ օh4 2. ց3# 1-0
4. 1. Ձd6 d3 [1... Ձxd6 2. Չxb6#] 2. Չc7# [2. Չxb6#]